## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

**2025 թվականի օգոստոսի 29-ին կնքված N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/79-3 գնման պայմանագրի**

«27» 04 2026թ.

ք. Երևան

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս Ռեկտոր՝ Հ. Ջաքոյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԹՈՓ ԲԻԼԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Հայրապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով ընդունելով 2025 թվականի օգոստոսի 29-ին կնքված N ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/79-3 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 և 8.8 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակում նշված աշխատանքի կատարման ժամկետը 3-րդ չափաբաժնի մասով խմբագրել և ներկայացնել նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և համապատասխան տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 100 օրացուցային օրվա ընթացքում»:

1.2 Պայմանագրի Հավելված N 2.3-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի և 20.02.2026թ. կնքված համաձայնագիր 1-ի Հավելված N 1.3-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի փոխարեն հիմք ընդունել և հաստատել կից Հավելված N 1.1-ով, ներկայացված «ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ը:

1.3 Պայմանագրում և Պայմանագրի շրջանակում կնքված N 1 Համաձայնագրում Կապալառուի անվանումը փոփոխել և կարդալ հետևյալ կերպ. «ԹՈՓ ԲԻԼԴ» ՍՊԸ:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1.1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր ------------ Հ. Ջաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԹՈՓ ԲԻԼԴ» ՍՊԸ
ՀՀ ք Երևան, Նորք Նոր Նորք Մոլդովական փ.
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220250122912000
ՀՎՀՀ 00802157

Տնօրեն՝ ------------ Ա. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
2025 թվականի օգոստոսի 29-ին կնքված
ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-25/79-3 ծածկագրով պայմանագրի
«27» 04 2026թ. կնքված
թիվ 2 համաձայնագրի

## Չափաբաժին 3

## ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

**«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 5-րդ մասնաշենքի Վարժարանի թևի 3-րդ և 4-րդ հարկերի վերանորոգման շինարարական աշխատանքների կատարման**

| Հ/հ | *Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ* | *Աշխատանքների կատարման ժամկետը* | |
|---|---|---|---|
| | | *Սկիզբը* | *Ավարտը* |
| 1 | 1.Քանդման աշխատանքներ<br>2.Պատուհանների և դռների տեղադրում | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և համապատասխան տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո | 75 օրացուցային օր |
| 2 | 3.Վերանորոգման աշխատանքներ | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և համապատասխան տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո | 85 օրացուցային օր |
| 3 | 4.Ներքին հարդարման աշխատանքներ | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և համապատասխան տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո | 95 օրացուցային օր |
| 4 | 5.Հատակի երեսպատման և այլ աշխատանքներ | Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և համապատասխան տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո | 100 օրացուցային օր |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | ***Կողմերի միջև կնքվող համաձայնագրի և համապատասխան տեխնիկական հսկողության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո*** | ***100 օրացուցային օր*** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան, Տերյան 74
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470100531030000
ՀՎՀՀ 01507028

Ռեկտոր __________ Հ. Ջաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԹՈՓ ԲԻԼԴ» ՍՊԸ
ՀՀ ք Երևան, Նորք Նոր Նորք Մոլդովական փ.
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220250122912000
ՀՎՀՀ 00802157

Տնօրեն՝ __________ Ա. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.